Հաստատում եմ՝ 30 մարտի 2021 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտական գծով պրոռեկտոր

տեխնիկական գիտությունների դոկտոր,

ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի

ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մարիամ Ժիրայրի Առաքելյանի՝ «Մեդիակոմպետենցիայի ձևավորումը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» թեմայով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից հասարակության գլոբալիզացման, միջազգայնացման, զանգվածային հաղորդակցական միջոցների սրընթաց տարածման պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ստանում մեդիակրթության զարգացման հիմնահարցը: Այդ տեսանկյունից Մ. Առաքելյանի ատենախոսության թեման չափազանց արդիական է, քանզի նախադրյալներ է ստեղծում ՀՀ-ում կրթական համակարգի նորացման, սովորողների հետաքրքրությունների ու դրդապատճառների բարձրացման համար, հատկապես օտար լեզվի, տվյալ դեպքում՝ անգլերենի ուսուցման մասնագիտական դասընթացում:

Ողջունելի է այն փաստը, որ հեղինակն ուսուցման մոդելը մշակելիս հիմնվում է նորարարական սկզբունքների վրա՝ ի թիվս անձնակենտրոն, կոմպետենտային և գործունեական մոտեցման, կրթական համակարգի տեղեկատվայնացման և մեդիականացման (էջ 65-69):

Ներածության մեջ հեղինակն իրավացիորեն նշում է, որ մեր հանրապետությունում բացակայում են մեդիակրթությանը նվիրված մեթոդական

հետազոտությունները: Չէ՞ որ ներկա պայմաններում համաժամանակյա տեղեկատվություն հայթայթելու կարողությունը դառնում է կյանքի հրամայական: Այնինչ ուսուցման և ուսումնառության գործընթացում համացանցային ռեսուրսների ինքնաբուխ օգտագործումը որպես ուսումնական ձեռնարկներին զուգահեռ լրացուցիչ տեղեկատվության աղբյուր՝ առանց դրանց արդյունավետ կիրառումն ապահովող մեթոդական համակարգի ներդրման, ուսուցման գործընթացը դարձնում են չհամակարգված և միակողմանի:

Ատենախոսը, ընտրելով վերոհիշյալ թեման, հստակեցրել է այն ընթերցանության ուսուցմամբ՝ շեշտը դնելով հատկապես որոնողական (selective reading) և տեքստի ընդհանուր բովանդակության ըմբռնման (reading for information/gist) կարողությունների ձևավորման վրա (էջ 73): Պատշաճ ձևով հիմնավորված են ատենախոսի կողմից առաջ քաշված խնդիրները, ինչպես նաև գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական վարկածը և պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Աշխատանքի հաջողության առնչությամբ պետք է նշել ՏՀՏ-ների և հատկապես մեդիատեխնոլոգիաների դիդակտիկական ներուժը (21-28): Աշխատանքում մանրակրկիտ վերլուծության արդյունքում դուրս են բերվել այն էական հատկանիշները, որոնք բնութագրում են մասնավորապես «մեդիակոմպետենցիա» հասկացությունը: Որպես առաջնահերթ խնդիր՝ Մ. Առաքելյանը դիտարկում է մեդիակոմպետենցիայի գործիքակազմը (էջ 31):

Ուշադրության են արժանի հեղինակի կողմից մշակված մեթոդական համակարգը, ռազմավարությունը և վարժությունների համակարգը (էջ 74 -101), որի հիմքում ընկած են մեդիակոմպետենցիայի ձևավորման նորովի սկզբունքները:

Աշխատանքում արժևորվում են նաև մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ անգլերեն ընթերցանության ուսուցման մոդելի մշակման մեթոդաբանական հիմքերը (էջ 69-74): Ուշագրավ է այն փաստը, որ հեղինակի կողմից մշակված մեթոդական համակարգը չի ներկայացվում որպես զուտ տեսական դրույթ, այլ գործնականում հիմնավորվում է փորձարարական ուսուցմամբ: Առանձնահատուկ շեշտադրման է արժանի հայտորոշիչ և փորձարարական թեստավորման արդյունքների զուգադրական վերլուծությունը (101-116):

Հետազոտության արդյունքում ստացված տվյալների իսկությունն ամենևին կասկած չի հարուցում և ապացուցում է առաջադրված վարկածի հավաստիությունը:

Ատենախոսության թեմայից և նպատակներից են բխում շարադրման տրամաբանությունն ու կառուցվածքը:

Աշխատանքն ընդգրկում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, գրականության ցանկ և հավելված, ինչը համապատասխանում է ընդունված կարգին:

Դրական գնահատելով Մ. Առաքելյանի աշխատանքը՝ կցանկանայինք անել որոշ դիտարկումներ.

1.Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը անդրադարձ կատարեր ոչ միայն համացանցային ռեսուրսների մշակմանը, այլ նաև հեռահաղորդակցական տեխնոլոգիաներին, այսինքն՝ Web 2.0 սոցիալական ցանցերի գործառույթներին:

2. Մեդիակոմպետենցիան, լինելով բազմագործառույթային, ենթադրում է տեղեկատվության որոնում և հայթայթում, արժևորում և գնահատում, ի վերջո օգտագործում, բայց նաև տեղեկատվական ռեսուրսների ստեղծում և փոխանակում, ինչը հույժ կարևոր է, բայց չի ներառվել հեղինակի հետազոտության շրջանակներում:

3. Ցանկալի է ընդլայնել այսպես կոչված համացանցային ուսումնական ռեսուրսների ցանկը:

4. Պարզ չէ, ինչպես են համակցվում առաջադրված քայլերը վարժությունների համակարգի անցկացման հետ:

Մեր կողմից արված դիտարկումներն ամենևին չեն նսեմացնում գրախոսվող աշխատանքի արժեքը: Լինելով գիտականորեն հիմնավորված՝ Մ. Առաքելյանի ատենախոսությունը որոշակի ներդրում ունի օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի տեսության և պրակտիկայի մեջ: Անտարակույս, այն կխթանի մեդիաղիդակտիկայի ոլորտի հետագա ուսումնասիրությունները, մասնավորապես օտար լեզվի դասընթացում Web 2.0 տեխնոլոգիաների արդյունավետ ներդրման մեթոդական համակարգի մշակումը:

Հատուկ պետք է նշել աշխատանքի գիտական ոճի բարձր մակարդակը: Աշխատանքը կառուցված է տրամաբանորեն և արտակարգ գրագետ լեզվով, ինչը հազվադեպ է հանդիպում թեկնածուական ատենախոսություններում:

Կարելի է պնդել, որ Մ. Առաքելյանի՝ «Մեդիակոմպետենցիայի ձևավորումը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը լիովին բավարարում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին վերաբերող ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, իսկ հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2021 թվականի մարտի 30 - ին կայացած N 8 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա.Ա.Սիմոնյան

Հաստատում եմ՝ 30 մարտի 2021 թ.
Գիտքարտուղար,
բ.գ.թ.՝ Ռ.Ս. Կասաբաբովա